

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

Վեցերորդ հաղորդում

**Հոգևոր սկզբունքները, կյանքի դասերն ու սուրբ նախազգուշացումները,
որոնք տեսնում ենք Դավթի պատմության մեջ**

Գրվածքների լնրերցում. Ա Թգ 16:1–Բ Թգ 24:25, Գրծ 13:22, 36

**I. Դավթի պատմության մեջ (Ա Թգ 16:1–Բ Թգ 24:25) մենք պետք է տեսնենք
Աստծու գերիշխանությունը և Դավթի՝ խաչի դասերը յուրացնելը.**

Ա. Աստծու գերիշխանությամբ Դավթիր ստուգվեց և հավանության արժանացավ Աստծուն իր ապավինելու և Գողիարին պարտության մատնելու հարցում՝ Ա Թգ 17:1-58.

1. Դավթի՝ որպես հովվի փորձառությունը նրան սովորեցրել էր ապավինել Տիրոջը, ուստի երբ նա լսեց, թե Գողիարն ինչպես է մարտահրավեր նետում, կարողացավ Սավուդին ասել. «Զո՞ ծառան իր հոր ոչխարճերն էր արածեցնում. ու երբ առյուծ կամ արջ էր գալիս ու հոտից ոչխար տանում, ես նրա հետևից զնալով՝ զարկում էի նրան ու գառանը նրա քերանից ազատում: Եվ երբ նա ինձ վրա էր հարձակվում, բռնում էի նրա մորութից, խփում ու սպանում էի.... Եհովան, ով ինձ ազատեց առյուծի ու արջի ձեռքից, Նա ինձ այս փոշտացու ձեռքից էլ կազատի»՝ խի. 34-37:
2. Դավթիր Գողիարին ասաց, որ «Եհովան սրով ու նիզակով չի փրկում, քանի որ պատերազմը Եհովայինն է, ու Նա ձեզ մեր ձեռքն է մատնելու» (խ. 47). Դավթիր դրու եկավ՝ Գողիարի դեմ մարտնչելու (խի. 40-48) և սպանեց նրան՝ պարսատիկով քարը նետելով Գողիարի ճակատին և նրա իսկ սրով նրան զլխատելով (խի. 49-54):
3. Գողիարի նկատմամբ Դավթի հաղթանակը Աստծու՝ նրան ընտրելու և օծելու համոզիչ ապացույց էր. Դավթի փորձառությունից պետք է գիտակցենք, որ, քանի որ այսօր հետամտում ենք Քրիստոսին, մեր միջավայրի ամեն մի տեսանկյուն բացարձակորեն Աստծու գերիշխան ձեռքի ներքո է՝ Մտք 10:29-31, Սղմ 31:14-15ա, 39:9, Հոմ 8:28-29, Եսյ 45:15:

Բ. Դավթին Աստծու գերիշխանությամբ ընտրվեց Սավուդի, ով այդ ժամանակ քազավոր էր, սպասավոր լինելու. այս երկու մարդու միասին դրվելով՝ Սավուդը մերկացվեց որպես մարդ, ով ընդդիմանում էր Աստծու կամքին, իսկ Դավթիր հայտնի արվեց որպես մարդ, ով Աստծու սրտի համաձայն էր՝ Ա Թգ 18:6-11ա.

1. Այն, որ Դավթիր ստուգվում էր Սավուդի հետ իր փոխարարերության մեջ, նշանակում էր, որ Դավթիր մշտապես խաչի վրա էր դրվում. յուրաքանչյուր առաջադրանքի ժամանակ, որին Սավուդն ուղարկում էր Դավթին, Դավթիր գործում էր խորագետ կերպով, ուստի Սավուդը նրան կարգեց պատերազմող մարդկանց վրա. մի անգամ, երբ Դավթիր վերադառնում էր փոշտացիներին կոտորելուց, Խսրայելի

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

բոլոր քաղաքներից կանայք դուրս եկան և իրար երգում էին. «Սավուոն իր հազարավորներին կոտորեց, իսկ Դավիթն իր տասը հազարներին»՝ խխ. 5:7:

2. Այս գովար չազդեց Դավթի վրա, բայց այն ազդեց Սավուոնի վրա. Սողոմոնն ասում է. «Մարդը ստուգվում է իրեն ուղղված գովառվ» (Առկ 27:21). Սավուոնը շատ բարկացավ և նախանձեց Դավթին, ինչը ցույց է տալիս, որ նա լիովին մսեղիում եղող անձ էր ու բացարձակորեն կենտրոնացած էր իր շահերի վրա. այդ օրվանից Սավուոնը որոշեց սպանել Դավթին, իսկ Դավիթը բաքնվելու տեղ չուներ. Սավուոնը Դավթին նախանձելուց անցավ դավելու, թե ինչպես կարող է սպանել նրան՝ առանց իր անունը վնասելու՝ Ա Թգ 18:10–20:42:
3. Եթե Սավուոնը փորձեց սպանել Դավթին, Դավիթը չպայքարեց և ոչինչ չարեց իր վրեժն առնելու համար. նա միայն խույս տվեց նրանից. ի պատասխան վրեժխնդիր լինելն ու պայքարելը մսեղիի գործեր են, իսկ նրանք, ովքեր կիրարկում են մսեղիի բաները, Աստծու թագավորության մեջ բաժին չունեն՝ 18:11, հմմտ Հոմ 12:19, Եփս 4:26, Գլու 5:21, 24:
4. Դավիթը մարդ էր, ով իր սրտից ճանաչում էր Աստծու իշխանությունը. Թագավորաց առաջին գրքում տեսնում ենք, որ Սավուոն անապատում հետապնդում էր Դավթին, որպեսզի սպաներ նրան. Դավիթը Սավուոնին սպանելու հնարավորություն ուներ, բայց նա երկյուղում էր Աստծուց և չհամարձակվեց տապալել Աստծու սահմանած աստվածային կարգը՝ 18:6–26:25:
5. Եթե Դավիթն ապստամբեր Սավուոնի դեմ, ժողովրդի համար կդառնար Աստծու նշանակած ու դրած թագավորի դեմ ապստամբության օրինակ. Դավթի տրամադրվածությունը «ես»-ն ուրանալն ու Աստծու իշխանությանը ենթարկվելն էր:
6. Սավուոն անհնագանդ եղավ Աստծուն և մերժվեց Աստծու կողմից, բայց այդ բանը Սավուոնի և Աստծու միջև էր. ինչ վերաբերում է Դավթին, նա ենթարկվում էր Աստծու օծյալին, և դա պատասխանատվությունն էր Աստծու առջև՝ 24:4-6, 26:9, 11, Բ Թգ 1:9-16:
7. Եթե ոմանք զին վճարեն, որպեսզի փորձառարար ապրեն խաչի ջախջախելը՝ խաչի ներքո ապրելով, ճանաչեն իրենց բնական կյանքն ու նախահակումը և աշխատեն դրանց վրա, մահվան մատնեն մսեղին և իրենց ուրանան Աստծու առջև, անշուշտ կճանաչեն Աստծու իշխանությունը և կկարողանան բերել Աստծու իշխանությունը. սա իիմնարար սկզբունք է:
8. Նորկտակարանյան ըմբռնման համաձայն՝ Դավիթն ամեն օր կրում էր խաչը ցանկացած իրավիճակում. Փլա 3:10-ը ցույց է տալիս, որ խաչը կրելու մեր ուժը Քրիստոսի հարության զորությունն է. Քրիստոսը մտել է մեր մեջ, որպեսզի ապրի մեր մեջ և կրի խաչը մեր ներսում՝ հմմտ Երգ 2:8-9, 14:

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

9. Խաչի դասերը յուրացնելուն զուգընթաց Դավիթը վայելում էր Աստծու մատակարարումը՝ ի դեմս Հովհանքանի և Սեղբողի. առանց նրանց՝ Դավիթը Սավուղից խույս տալու միջոց չէր ունենա՝ Ա Թգ 20:1-42, 19:11-18:
10. Աստծու գերիշխանությանը ենթարկվելով՝ Դավիթն ընդունեց խաչի դասերը, և վերջնարդյունքում նա եղավ ոչ թե կրուստ կրող, այլ շահող ու հաղթող, ոչ թե շարշարվող, այլ վայելող՝ Փլա 1:19, 3:8-9, Բ Կրթ 4:7, 16-18, հմնտ 2:12-14:
11. Դավիթ կյանքը ջախջախվածության կյանք է խորհրդապատկերում. արտաքին մարդու ջախջախումը մեր քնական նախահակման, մեր «ես»-ի ջախջախումն է. Սուրբ Հոգու կարգավարժանքի նպատակն այն է, որ ջախջախված մարդ լինենք. Աստված մեզ լիակատար անընդունակության և անօգնականության վայրում է դնում, որպեսզի Իրեն՝ Իր ողջ անքննելի հարստությամբ հանդերձ, մեր մեջ ներդնելու ազատ ճանապարհ ունենա՝ 1:8-9, 4:16-18, 12:9-10, Օվս 6:1-3, Հոմ 8:28-29, հմնտ Հվի 12:3:

II. Դավիթը հոգում էր երկրի վրա Աստծու բնակատեղի համար՝ Աստծու Տապանակի բնակատեղի համար՝ Բ Թգ 6:1-7:29, Սղմ 132:1-18.

- Ա. Թեև Աստված չէր ուզում, որ Դավիթը կառուցի տաճարը, վերջինս պատրաստեց կառուցողներին, տեղը և նյութերը տաճարի կառուցման համար. Աստված նաև Իր Հոգով Դավիթն բացահայտեց տաճարի նմուշը, և նախքան մեռնելը Դավիթն այս նմուշը փոխանցեց իր որդի Սողոմոնին. այսպիսով՝ Դավիթն իրականացրեց իր սպասավորությունն ու համագործակցեց Աստծու հետ տաճարի կառուցման ավարտունացման համար՝ Բ Թգ 8:11, Գ Թգ 7:51, Ա Մնց 22:14-16, 29:1-5, 28:11-19, Գրծ 13:22, 36:
- Բ. Դավիթը նախանձախնդիր էր Աստծու համար տաճար կառուցելու (Բ Թգ 7:1-3), բայց Աստված մերժեց Դավիթի բարի մտադրությունը. Աստված Նաթան մարգարեին ուղարկեց Դավիթի մոտ հարցնելու. «Դո՞ւ պիտի Ինձ համար տուն կառուցես, որպեսզի Ես այնտեղ բնակվեմ»՝ խ. 5.
 1. Սա ցույց է տալիս, որ եկեղեցում մեր ամքող աշխատանքն ու ծառայությունը պետք է սկիզբ առնեն Աստծուց և պետք է համապատասխանեն Նրա ցանկությանը. ցանկացած բան, որ սկիզբ է առնում ու մեկնարկվում է մարդու կողմից, անկախ այն բանից, թե դա որքանով է Աստծու համար, Քրիստոսի ներկայությունից զուրկ կրոնական գործունեություն է:
 2. Աստծուն ծառայելու մեր սիրտն ընդունելի է, բայց Նրա համար ինչ-որ բան անելու մեր որոշումն ընդունելի չէ Նրա համար. Աստված Դավիթն ասաց. «Դո՞ւ պիտի....». Աստված չի ուզում, որ մենք ինչ-որ բան որոշենք Իր փոխարեն:
 - Գ. Քանի որ Դավիթը մեկն էր, ով երկյուղում էր Աստծուց ու համագործակցում էր Աստծու հետ, նա չզայրացավ, երբ Աստված Նաթանի միջոցով

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԱՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

նրան ասաց, որ դադար տա իր որոշմանը՝ լինելու մեկը, ով կառուցելու է տաճարը. այն, որ Դավիթը դադարեցրեց իրականացնել տաճարը կառուցելու իր ցանկությունը, մեծ քան է. Մարգարետ Բարբեր քույրն ասել է. «Նա, ով չի կարողանում դադարեցնել հանուն Աստծու աշխատելը, չի կարող հանուն Աստծու աշխատել» (*Վիքնես Լի, Երկերի ժողովածու, 1953թ., հո 1, «Ծանաչել կյանքը և եկեղեցին»)՝ Ակա 10:38-42:

- Դ. Դավիթի կանգ առնելը տիեզերքում երկակի վկայություն հաստատեց. նախ՝ տիեզերքում ամբողջ աշխատանքը պետք է թիսի Աստծուց, ոչ թե մարդուց. երկրորդ՝ նշանակություն ունի միայն այն, ինչ Աստված է մարդու համար անում, ոչ թե այն, ինչ մարդն է Աստծու համար անում՝ Բ Թգ 7:11-14ա, 18, 25:
- Ե. Խոր մեր ներսում պետք է յուրացնենք, որ Աստծուն միայն մեր համագործակցությունն է պետք. Նա կարիք չունի, որ մենք Իր համար ինչ-որ քան անենք. մենք պետք է դադարեցնենք մեր բոլոր կարծիքները, որոշումներն ու գաղափարները. մենք պետք է քույլ տանք, որ Նա խոսի, քույլ տանք, որ Նա միջամտի, և քույլ տանք, որ Նա հրամայի՝ Մտք 17:5:

III. Դավիթի նկատմամբ դատաստանի գրառումը՝ Աստծու պատժով հանդերձ, արված է որպես զգուշացում մեզ համար այսօր (Ա Կրթ 10:11). Աստված ոչ միայն սիրող ու ողորմած է, այլև արդարացի ու ահազդու. Աստված ներեց Դավիթին, քայլ նաև կարգավարժեց ու պատժեց Դավիթին՝ Իր կառավարական արդարության համաձայն (Բ Թգ 12:10-14).

- Ա. Այն քանից հետո, երբ Իսրայելի քշնամիները ենթարկված էին, և Դավիթը բարձրացվել էր որպես Իսրայելի թագավոր, նա, խաղաղ իրավիճակում գտնվելով, մեծ մեղքեր գործեց՝ շնորհյուն և մարդասպանություն. սա ցույց է տալիս, որ երբ մենք անհոգ ու խաղաղ իրավիճակում ենք, հեշտությամբ կարող ենք գայթակղովել և հագուրդ տալ մեր մսեղիին՝ 11:1-27, Ա Պտ 4:1 և ծրգ 4:
- Բ. Դավիթի մեղքը աչքերի տենչանքին և մսեղիի տենչանքին հագուրդ տալու արդյունք էր (Բ Թգ 11:2-3). Դավիթը, թագավորական իշխանությունը չարաշահելով (խս. 4-5), կանխամտածված շնորհյուն գործեց՝ ուրիշի կնոջը գողաճալով:
- Գ. Նման գործողություն իրականացնելով՝ Դավիթը փորձեց ծածկել իր չար արարքը նենազ հնարքներով (խս. 6-13). այնուհետև նա սպանեց Ուրիային՝ իր հավատարիմ ծառային՝ դավադրության մեջ մտնելով Հովարի հետ, որպեսզի կարողանար տիրանալ Ուրիայի կնոջը (խս. 14-25, 12:9):
- Դ. Այս մեկ մեղքով Դավիթը խախտեց Տաաը Պատվիրաններից վերջին հինգը (Ելց 20:13-17). նրա մեղքը մեծ անրգանք ու վիրավորանք էր Աստծու հանդեպ, և այն գրեթե ի չիք դարձրեց անցյալի նրա բոլոր ձեռքբերումները:
- Ե. Դավիթը, Աստծու սրտի համաձայն մարդ լինելով (Ա Թգ 13:14), Աստծուն հմարավորություն ընձեռեց թագավորման դարաշրջանը սկսելու՝

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

Իր եկող Քրիստոսի համար երկրի վրա Իր թագավորությունը հաստատելու համար, բայց նա ձախողվեց մսեղիի տենչանքին հազորդ տալու հարցում (Գ Թգ 15:5). այս բանում Դավիթն անփոյթ էր, և նա զոհեց իր բարձր ձեռքբերումները Աստծու հանդեպ իր հոգեար ձգտման մեջ. սա պետք է նախազգուշացում լինի մեզ բոլորիս համար:

- Զ. Որքա՞ն ցավալի է, որ Դավիթը նենց բանսարկուի զայթակղության կրիտիկական պահին ժուժկալություն չգործադրեց իր տենչանքի նկատմամբ, այլ հազորդ տվեց դրան և ծանր մեղք գործեց, որը ծայրաստիճան վիրավիրեց Աստծուն:
- Ե. Աստված սիրում էր Դավիթն, բայց Դավիթն իր մեղքի պատճառով կորցրեց իր դիրքն ու կարգավիճակը, ինչպես նաև տասներկու ցեղերից տասնմեկը (Բ Թգ 20:1-2). Դավիթի մեղքը սերմանեց Սողոմոնի ապականության սերմը (12:24), որի հետևանքը եղավ Աստծու տված թագավորության բաժանումը (Գ Թգ 11:9-13, 12:1-17), ինչպես նաև թագավորման մեջ Սողոմոնի հետնորդների ապականության սերմը, որի հետևանքը եղավ պետության և իրենց հայրերի սուրբ երկրի լիակատար կորուստը, սուրբ ժողովունի գերեվարությունը և ողջ երկրագնդով մեկ նրանց սփովելն ու մինչ օրս խաղաղություն չգտնելը:
- Ը. Դավիթի պատմությունից տեսնում ենք, որ Աստծու կառավարական ձեռքի տակ ընկնելը լուրջ բան է (Բ Թգ 12:10-14). Դավիթն արագորեն վերականգնեց Աստծու հետ իր հաղորդակցությունը, բայց Աստծու կարգավարժանքը շարունակվեց նույնիսկ նրա մահից հետո (Ղ. 15թ-20:26):
- Թ. Իր մեղքերը խոստովանելու արդյունքում Դավիթի հաղորդակցությունն Աստծու հետ վերականգնվեց, ինչպես բացահայտված է 51-րդ սաղմուսում, բայց նա հայտնվեց Աստծու կառավարական ձեռքի տակ. իր ձախողումից հետո իր ընտանիքի մեջ բազմաթիվ շար բաներ եղան, ներառյալ արյունապղծությունը, սպանությունը և ապստամբությունը՝ Բ Թգ 12:15թ-20:26:
- Ժ. Աստված խիստ պատիժ կիրառեց Դավիթի նկատմամբ, որովհետև նրա մեղքը շար շար էր. Դավիթի ընտանիքում աննախադեպ շարիքի աղբյուրը մսեղիի տենչանքին Դավիթի հազորդ տալու էր. սա ցույց է տալիս, որ Աստծու պատիժն ու Նրա կառավարական ներգործությունն Իրեն սիրողների նկատմամբ կարող են նաև տարածվել նրանց երեխաների վրա:
- ԺԱ. Սա պետք է լուրջ ահազանգ ու նախազգուշացում լինի մեզ համար Քրիստոսի հետ մեր փոխարարերություններում. այն, ինչ մենք ենք, այն, ինչ ցանկանում ենք, ինչ մտադրվում ենք անել և ինչպես վարվում ենք, մեծապես կապված են Քրիստոսի մեջ մեր մնալու և մեր վայելքի համար Նրա ողջ անքննելի հարստությանը մասնակցելու հետ. եթե մենք այս հարցերից որևէ մեկում իրավացի չլինենք Աստծու հանդեպ, կկրենք Քրիստոսի՝ որպես մեր վայելքի կորուստը:

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- ԺԲ.** Համարովանդակ Քրիստոսը՝ որպես մեր քնակատեղը, մեր համարովանդակ բարի երկիրը և այն ամենը, ինչի կարիքն ունենք մեր վայելքի համար, կփսի մեզ իրենից և այլս թույլ չի տա, որ վայելենք իրեն, եթե պատշաճ չենք Նրա հետ մեր հարաբերության մեջ՝ Ղտ 18:25, Հյտ 3:16:
- ԺԳ.** Ի վերջո Դավիթը ոչ միայն ծերացավ, այլև մարեց. Դավիթի կյանքը լավ սկիզբ ուներ, ինչպես ելնող պայծառ արևը, և նրա կյանքը նրա ձեռքբերումների հետ նման էր կեսօրին շողացող արևի. սակայն տենչանքին նրա հագուրդ տալը (Բ Թգ 11:1-27) փչացրեց նրա ձեռքբերումները, և նրա պայծառ կյանքին մարել տվեց, ինչպես արևը՝ մայրամուտի ժամանակ. Դավիթի ծերության մեջ պայծառ, գերազանց ու հոյակապ ոչինչ չկար (Գ Թգ 1:1-4, հմնտ Երկ Օր 34:7, Ծնդ 48:14-16, Առկ 4:18):
- ԺԴ.** Քրիստոնեական կյանքը Աստծու կառավարումը ճանաչելու կյանք է. մենք հնանում ենք այն, ինչ սերմանում ենք. որքան մեծահոգի լինենք ուրիշների հանդեպ, այնքան Աստված մեծահոգի կլինի մեր հանդեպ. եթե մենք մանրախնդիր ու խիստ լինենք մեր եղբայրների հանդեպ, Աստված մանրախնդիր ու խիստ կլինի մեր հանդեպ. երբ ուրիշները հիվանդ են կամ դժվարությունների մեջ, դա նրանց մեր օգնելու ժամանակն է, ոչ թե նրանց մեր քննադատելու՝ Գյտ 6:7, Ա Թսղ 5:14-15, Ղկս 6:36-38, Մտք 7:1-2.
1. Մենք պետք է սովորենք մեծահոգի ու ներող մարդիկ լինել. եթե ուրիշների հանդեպ խիստ լինենք, Աստված մեր հանդեպ խիստ կլինի. մենք պետք է խուսափենք քննադատելուց, դատապարտելուց կամ ուրիշների մասին թերևամտորեն խոսելուց. ուրիշների վերաբերյալ մեր քննադատությունն ու անփոյք ակնարկները հաճախ դատաստան են դառնում մեր նկատմամբ՝ 6:15, 18:23-35:
 2. Բազմարիվ եղբայրներ այսօր քշվառ կերպով ընկել են միայն մեկ պատճառով. նրանք չափազանց խստորեն են ուրիշներին քննադատել անցյալում, և այսօր նրանց տկարություններից շատերը հենց այն տկարություններն են, որոնք նրանք քննադատել են անցյալում:
 3. Մենք կոչված ենք ուրիշներին օրինելու, ուստի մենք՝ որպես օրինված մարդիկ, պետք է միշտ օրինենք ուրիշներին, որպեսզի օրինություն ժառանգենք. մենք կժառանգենք այն, ինչով օրինում ենք՝ Ա Պտ 3:8-11, Մտք 10:13, հմնտ Թվշ 6:22-27: